| | | |
|---|---:|---:|
| Հարկ արքունական գնահատութեան ուսումնարանապատկան տանց և այգեաց | 20 | 90 |
| Մանր ծախք ապակեա լուսամուտից, յատակաց նորոգութեան և այլոց | 107 | 30 |
| Տուաւ վասն ածելոյ դեղին մամս տասն և մի փութ | 23 | 85 |
| Գնեցաւ մի փութ պատրոյգ յԱրիսլէ Մատինեանց | 13 | — |
| Գումարն է | 2776 | 82 |

Ծ-Նօթ. Երկսեռ ուսումնարանների 1884 Թ. ծախք՝ երկու հազար եօթը հարիւր եօթանասուն և վեց (2776) ռուբլի, ութսուն և երկու (82) կոպէկ դուրս գալով ընդհանուր գումար՝ չորս հազար հարիւր վաթսուն և ութ (4168) ռուբլի, ութսուն (80) կոպէկից՝ մնում է Հոգաբարձութեան մօտ առ մէկն Յունվարի 1885 ամի մի հազար երեք հարիւր իննսուն և մի (1391) ռուբլի, իննսուն և ութ (98) կոպէկ.—Պէտք չէ մոռանալ այն, որ Հոգաբարձութիւնս 1884 Թ. ընթացքում ունեցել է շատ անախնկալ ծախսեր, ինչպէս ներկայ հաշուի ծախքի տակ №№ 6 և 8 բոլորովին անակնունելի են եղել և յետագայ տարիներին չի կարող լինել.

Նախախագահ Հոգաբարձութեան՝ ԳԷՈՐԳ ԱԻԱԳ Ք. Տ. ՍԱՐԳՍԵԱՆ

Քարտուղար՝ ԵՐՈՒԱՆԴ ԱՊՐԻԼԵԱՆ.

---

## ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ.

Արարատի հրաւէրքին միտ դնելով, Մոսկուայի Հայ ուսանողների մանկական գրքերի հրատարակութիւնը հաճեցաւ իւր հրատարակութիւնները ուղարկել Մայր Աթոռոյս և Ճեմարանի գրադարաններին.

Շնորհակալութիւն.

—

Շնորհակալութեամբ ստացանք

«ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱՑՈՒԹԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ»

հեղինակութիւն Ս. Վարշամեան, գինն է մի ռուբլի.

—

### ՎՐԻՊԱԿ.

Այս ամսագրոյ մի քանի օրինակների մէջ 162 և 169 երես ի բաց թողուած են հետևեալ անուններն. Ընդամ Սինօդի Գեր. Ներսէս Եպիսկոպոս Խուդավերդեան. Պ. Աղէքսանդր Լալայեան՝ պատգամաւոր Թեմին Շամախւոյ և Պ. Աղէքսանդր Ղազարեան՝ պատգամաւոր Կարուց.